ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№___4456-Ա____ « 31 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆՆ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԹԵՀՐԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ասիական քաղաքապետերի ֆորումի գլխավոր քարտուղարի կողմից ստացված հրավերը՝ Ասիական քաղաքապետերի ֆորումի 7-րդ գլխավոր ասամբլեային, քույր քաղաքների գագաթաժողովին մասնակցելու, ինչպես նաև Երևանի և Թեհրանի միջև երկկողմ համագործակցության հարցեր քննարկելու և երկու քաղաքապետերի առցանց հանդիպման օրակարգը հստակեցնելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ գործուղել Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաք Թեհրան՝ հետևյալ կազմով.

1) 2025թ. նոյեմբերի 25-ից 29-ը ներառյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյան.

2) 2025թ. նոյեմբերի 25-ից 30-ը ներառյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ Վերգինե Սիմոնյան:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման ծախսերը կատարվում են հրավիրող կողմի միջոցների հաշվին, բացառությամբ 1 օրվա գիշերակացի, 1 օրվա օրապահիկի և ավիատոմսի ձեռքբերման հետ կապված ծախսերի, որոնք իրականացվում են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանի և նույն վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ Վերգինե Սիմոնյանի բացակայության ընթացքում արտաքին կապերի վարչության պետի և արտաքին հարաբերությունների բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության արարողակարգի բաժնի պետ Լուսինե Ղարիբյանին:

4. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ